

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 20 -ի N 860 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն իրավական ակտը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող (շրջանառության մեջ դրվող և շահագործման մեջ գտնվող) ավտոտրանսպորտային միջոցների շարժիչներից արտանետվող բանած գազերում պարունակվող աղտոտող նյութերի արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակները (նորմերը՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցների խմբերի, ենթախմբերի, Էկոլոգիական դասի, օգտագործվող վառելիքի տեսակի, ավտոտրանսպորտային միջոցի թողարկման տարեթվի և բանած գազերի չեղոքացման համակարգի առկայության:

2. Սույն ակտի պահանջները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դրվող և շահագործման մեջ գտնվող մարդատար՝ U(M), քեռնատար՝ Ն (N) խմբերի ավտոտրանսպորտային միջոցների և S(T) խմբի (դիզելային շարժիչով ինքնագնա գյուղատնտեսական, ճանապարհաշինարարական, արտադրական մեքենաներ), գյուղատնտեսական, արտադրական, անտառարտադրական և անտառտնտեսական դիզելային տրակտորների, սահմանափակ և անսահմանափակ օդափոխությամբ վայրերում շահագործվող այլ անիվավոր կամ թրթուրավոր տրանսպորտային միջոցների վրա:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն ակտում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) սպիտակուրանսապորտային միջոցներ՝ ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոցներ.

2) սպիտակուրանսապորտային միջոցների ենթախմբեր՝

ա. Մ1 (M1)' ուղևորների փոխադրման համար նախատեսված թերև մարդատար ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք, բացի վարորդի տեղից, ունեն ուղիղ ոչ ավելի նստատեղ,

բ. Մ2 (M2)' ուղևորների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ (ներքին այրման շարժիչներով ավտորուսներ), որոնք, բացի վարորդի տեղից, ունեն ուղիղ ավելի նստատեղ, և որոնց առավելագույն զանգվածը չի գերազանցում 5 տ,

գ. Մ3 (M3)' ուղևորների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ (ներքին այրման շարժիչներով ավտորուսներ), որոնք, բացի վարորդի տեղից, ունեն ուղիղ ավելի նստատեղ, և որոնց առավելագույն զանգվածը գերազանցում է 5 տ,

դ. Ն1 (N1)' բեռների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ, որոնց առավելագույն զանգվածը չի գերազանցում 3,5 տ,

ե. Ն2 (N2)' բեռների փոխադրման համար նախատեսված, 3,5 տ-ից ավելի, բայց ոչ ավելի քան 12 տ առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ,

զ. Ն3 (N3)' բեռների փոխադրման համար նախատեսված, 12 տ-ից ավելի առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ,

է. Տ (T)' նոր թողարկված կամ հիմնովին վերանորոգված տրակտորներ և ինքնագնա գյուղատնտեսական դիզելային մեքենաներ, գյուղատնտեսական, արտադրական, անտառարտադրական և անտառտնտեսական դիզելային տրակտորներ, այդ թվում

որպես հիմք ծառայող ճանապարհաշխարարական մեքենաների և կոմունալ ու անտառ-տնտեսության մեջ օգտագործվող այլ մեքենաների համար, դիզելային շարժիչով ինքնա-գնա գյուղատնտեսական մեքենաներ, սահմանափակ և անսահմանափակ օդափոխու-թյամբ վայրերում շահագործվող մեքենաներ և տրակտորներ.

3) *շահագործման մեջ գրնավոր ավտուրբանսպորտային միջոցներ՝* սահմանված կարգով հաշվառված ավտոտրանսպորտային միջոցներ.

4) *շրջանառության մեջ դրվող ավտուրբանսպորտային միջոցներ՝* նոր թողարկվող և շրջանառության մեջ դրվող ու Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներ.

5) *ավտուրբանսպորտային միջոցի սուսլեագույն զանգված՝* ավտոտրանսպորտային միջոցներ արտադրող կազմակերպության կողմից սահմանված տրամսպորտային միջոցի առավելագույն զանգվածը.

6) *շարժիչային վառելիք՝* շարժիչի աշխատանքի համար անհրաժեշտ վառելիք, որի տևակներն են՝ քննողինը, սեղմված քնական զազը (ՄԲԳ), հեղուկացված նավթային զազը (ՀՆԳ) և դիզելային վառելիքը.

7) *շարժիչի ծնկաձև լիսեռի պարման նույնագույն հաճախություն՝* շարժիչի պտույտների թիվը լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատելու դեպքում (պտ/րոպ), որը սահմանված է ավտոտրանսպորտային միջոցներ արտադրող կազմակերպության կողմից.

8) *շարժիչի ծնկաձև լիսեռի պարման սուսլեագույն հաճախություն ($n_{սուր}$)՝* ծնկաձև լիսեռի պտուման հաճախությունը պարապ ընթացքի ուժիմում վառելիքի մատուցման ոտնակի մինչև վերջ սեղմնման դեպքում (պտ/րոպ).

9) *շարժիչի ծնկաձև լիսեռի պարման նվազագույն հաճախություն ($n_{սպա}$)՝* ծնկաձև լիսեռի պտուման հաճախությունը պարապ ընթացքի ուժիմում (վառելիքի մատուցման ոտնակը չսեղմելու դեպքում) (պտ/րոպ).

- 10) ***սուսլելագոյն ոլորող մումենպ'*** շարժիչի ոլորող մումենտի առավելագոյն արժեքը՝ սահմանված ավտոտրանսպորտային միջոցներ արտադրող կազմակերպության կողմից (Ն.մ).
- 11) ***վնասասկար արտաներումներ'*** շարժիչից արտանետվող բանած գագերում պարունակվող աղտոտող նյութեր, որոնք լինում են՝
- ա. գագերի ձևով՝ ածխածնի օքսիդ (CO), ածխաջրածիններ (CmHn), ազոտի օքսիդներ (NOx, արտահայտված երկօքսիդի (ս) հաշվարկով կամ համարժեք): Կախված վառելիքի տեսակից՝ ածխաջրածինների մևն գործակիցներն ընդունում են՝
- $\text{CH}_{1,85}$, բենզինի համար ($m=1, n=1,85$)
- $\text{CH}_{1,86}$, դիզելային վառելիքի համար ($m=1, n=1,86$)
- $\text{CH}_{2,525}$, հեղուկացված նավթային գազի համար ($m=1, n=2,525$)
- CH_4 , բնական գազի համար ($m=1, n=4$),
- բ. տեսանելի աղտոտող նյութերի ձևով՝ դիսպերս մասնիկներ, որոնք արտազատվում են սեղմումից առաջացած ինքնաբռնկումով աշխատող շարժիչների աշխատանքի հետևանքով.
- 12) ***շարժիչի աշխարսանքային ծավալ'*** ներքին այրման շարժիչների համար՝ գլանների գումարային ծավալը.
- 13) ***գազացին շարժիչ'*** հիմնական վառելիքի փոխարեն նաև հեղուկացված նավթային, կամ սեղմված բնական գազով աշխատելու համար նպաստեաված սարքավորմամբ լրակազմած ներքին այրման շարժիչ.
- 14) ***կայծացին բռնկումով աշխարող շարժիչ'*** բենզինով կամ գազով աշխատող հարկադիր բռնկման սկզբունքով աշխատող շարժիչ.
- 15) ***դիզելային շարժիչ'*** ճշման հետևանքով բռնկման սկզբունքով աշխատող շարժիչ.

16) **հասկրապեսած ռեժիմ՝** դիգելի աշխատանքի ռեժիմ, որի դեպքում շարժիչի ոլորող մոմենտի, հովացնող հեղուկի և յուղի ջերմաստիճանն ու ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունը չեն փոփոխվում.

17) **ազար արագացման ռեժիմ՝** առանց արտաքին բեռնվածության, շարժիչի ծնկաձև լիսեռի պտույտների հաճախության բարձրացումը նվազագույնից մինչև առավելագույնը՝ վառելիքի մատուցման կառավարման ոտնակի մինչև հենումը տեղափոխման դեպքում.

18) **ծխայնություն՝** բանած գազերի որոշակի երկարություն ունեցող սյան կողմից լուսային հոսքի կլանման աստիճանը բնութագրող ցուցանիշ.

19) **ծխաչափ՝** ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում լուսի կլանման գործակիցը չափելու սարք.

20) **լուսի կլանման գործակից (k , m^{-1})** ծխաչափով չափված ծխայնության արժեքն ըստ հիմնական սանդղակի՝ 0-ից մինչև անսահմանություն (∞) տիրույթում.

21) **լուսի թուլացման գործակից (N , %)** ծխաչափով չափված ծխայնության արժեքն ըստ օժանդակ գծային սանդղակի՝ 0-ից մինչև 100% տիրույթում.

22) **ծխայնություն՝ ազար արագացման ռեժիմում՝** լուսի կլանման գործակից (m^{-1}) առավելագույն արժեքը՝ չափված ազատ արագացման ռեժիմում.

23) **օդի ավելցուկի և գործակից՝** չափողականություն չունեցող մեծություն, որն իրենից ներկայացնում է շարժիչի գլանի մեջ մուտք գործող օդի զանգվածի հարաբերությունը գլան մուտք գործող վառելիքի լրիվ այրման համար տեսականորեն անհրաժեշտ օդի զանգվածին: Հաշվարկվում է բանած գազերի անալիզի արդյունքներով.

24) **Էկողոգիական դաս՝** դասակարգման կողմէ, որը բնութագրում է ավտոտրանսպորտային միջոցները՝ կախված աղտոտող նյութերի արտանետումների մակարդակից.

25) **ՄԱԿԻ ԵՏՀ-ի կանոններ՝** Միացյալ ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի միօրինակ կարգադրագրեր՝ տրված VIII բաժնում.

III. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

4. Շրջանառության մեջ դրվող ավտոտրանսպորտային միջոցները, համաձայն ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կանոնների, բաժանված են 1-6 Էկոլոգիական դասերի, ինչը համապատասխանում է Եվրո-1-ից մինչև Եվրո-6 դասերի պահանջներին: Էկոլոգիական յուրաքանչյուր դասը բնութագրվում է ՄԱԿ-ի ԵՏՀ համապատասխան կանոններով սահմանված արտանետումների մակարդակներով կամ արտանետումների տեխնիկական նորմատիվներով՝ ենթով ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերից ու շարժիչի տեսակից, որոնք ներկայացված են N 1 աղյուսակում: Վնասակար արտանետումների սահմանային թույլատրեկի մակարդակները սույն իրավական ակտով, կամ Միացյալ ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ ԵՏՀ) կանոններով սահմանված աղտոտող նյութերի արտանետումների թույլատրեկի սահմանային քանակական և որակական նորմեր են՝

1) սահմանված ՄԱԿ-ի ԵՏՀ N 83 կանոններով (կախված օգտագործվող վառելիքի տեսակից):

ա. Ա (A) մակարդակ՝ էթիլացված բենզինով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների շարժիչներից արտանետվող աղտոտող նյութերի համար սահմանվող սահմանափակումներ,

բ. Բ (B) մակարդակ՝ ոչ էթիլացված բենզինով, սեղմված բնական, կամ հեղուկացված նավթային գազով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների շարժիչներից արտանետվող բանած գազերում աղտոտող նյութերի համար սահմանվող սահմանափակումներ,

գ. Յ (C) մակարդակ՝ դիզելային վառելիքով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների շարժիչներից արտանետվող բանած գազերում աղտոտող նյութերի համար սահմանվող սահմանափակումներ,

դ. Հ(Ծ) մակարդակ՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների շարժիչներից արտանետվող բանած գազերում աղտոտող նյութերի համար սահմանվող սահմանափակումներ.

2) սահմանված ՄԱԿ-ի ԵՏՀ N 49 կանոններով (կախված շարժիչի տեսավլից)

ա. Ա (Ա) մակարդակ՝ ճնշման հետևանքով բռնկման սկզբունքով (դիզելային), ինչպես նաև սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող շարժիչներ ունեցող ավտոտրանսպորտային միջոցներին վերաբերող սահմանափակումների 1-ին մակարդակ՝ ընդունված 1992 թվականի հուլիսի 1-ին,

բ. (Բ) մակարդակ՝ ճնշման հետևանքով բռնկման սկզբունքով (դիզելային), ինչպես նաև սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող շարժիչներ ունեցող ավտոտրանսպորտային միջոցներին վերաբերող սահմանափակումների 2-րդ մակարդակ՝ ընդունված 1995 թվականի հոկտեմբերի 1-ին:

Արյուսակ N 1

Ավտոտրանսպորտային միջոցների էկոլոգիական դասը	Ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերը և շարժիչների տեսակները	ՄԱԿ-ի ԵՏՀ կանոնները և դրանցով սահմանված արտանետումների մակարդակները, կամ արտանետումների տեխնիկական նորմատիվները, գ/կՎտ.Ժ
1	Մ1, Ն1' 3,5 տ-ից ոչ ավելի առավելագույն զանգվածով, բենզինային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 83-02 կանոններով սահմանված Ա(Ա) մակարդակ
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-01 կանոններ
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն2, Ն3' բենզինային շարժիչներով	CO' 85q/կՎտ.Ժ, C _m H _n ' 5 q/կՎտ.Ժ NO _x ' 17 q/կՎտ.Ժ (9-ռեժիմային փորձարկման ցիկլ)
2	Մ1, Ն1' 3,5 տ-ից ոչ ավելի առավելագույն զանգվածով, բենզինային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 83-02 կանոններով սահմանված Բ(Բ) և 8(Ս) մակարդակներ
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' զազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-02 կանոններով սահմանված Ա(Ա) մակարդակ (01.07.1992թ.)
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն2, Ն3' բենզինային շարժիչներով	CO' 72q/կՎտ.Ժ, C _m H _n ' 4 q/կՎտ.Ժ NO _x ' 14 q/կՎտ.Ժ (9-ռեժիմային փորձարկման ցիկլ)

3	Մ1, Ն1' 3,5 տ-ից ոչ ավելի առավելագույն զանգվածով, կայծային բռնկումով շարժիչներով (քենզինային, գազային) և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 83-04 կանոններով սահմանված F(B), S(C) և T(D) մակարդակներ
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' գազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-02 կանոններով սահմանված F(B) մակարդակ (01.10.1995թ.)
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' քենզինային շարժիչներով	CO' 55 գ/կՎտ.ժ, C _m H _n ' 2,4 գ/կՎտ.ժ NO _x ' 10,0 գ/կՎտ.ժ (ՄԱԿ-ի ԵՏՀ N49-03 կանոններով փորձարկման ԵՄ /ESC/ ցիկլ)
4	Մ1, Ն1' 3,5 տ-ից ոչ ավելի առավելագույն զանգվածով, կայծային բռնկումով շարժիչներով (քենզինային, գազային) և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 83-05 կանոններով սահմանված F(B) մակարդակ ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' գազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-04 կանոններով սահմանված U(A) մակարդակ (01.07.1992թ.)
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' բարձր անցողականությամբ, դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 96-01 կանոններ
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' քենզինային շարժիչներով	CO' 20q/կՎտ.ժ, C _m H _n ' 1,1 գ/կՎտ.ժ NO _x ' 7 գ/կՎտ.ժ (ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-03 կանոններով փորձարկման ԵՄ /ESC/ ցիկլ)
5	Մ1, Ն1' 3,5 տ-ից ոչ ավելի առավելագույն զանգվածով, կայծային բռնկումով շարժիչներով (քենզինային, գազային) և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 83-05 կանոններով սահմանված F(B) և S(C) մակարդակներ
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' գազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-04 կանոններով սահմանված F(B) մակարդակ (01.10.1995թ.)
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' քենզինային շարժիչներով	CO' 4 գ/կՎտ.ժ, C _m H _n ' 0,55 գ/կՎտ.ժ NO _x ' 2 գ/կՎտ.ժ (ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-03 կանոններով փորձարկման ԵՄ /ESC/ ցիկլ)
6	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' գազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-04 կանոններով սահմանված F(B) մակարդակ (01.10.1995թ.) ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)

Արտանետումների մակարդակներն արտացոլում են արտանետումների առավելագույն թույլատրելի զանգվածը՝ ավտոտրանսպորտային միջոցների կողմից կատարված միավոր աշխատանքի հաշվարկով (գ/կՎ.տ.ժ):

IV. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

5. Ծրջանառության մեջ դրվող ավտոտրանսպորտային միջոցների և դրանց վրա տեղադրված ներքին այրման շարժիչների համար սահմանված են տեխնիկական պահանջներ՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերի և շարժիչի տեսակների, որոնք նշված են N 2 աղյուսակում:

Աղյուսակ N 2

Ավտոտրանս- պորտային միջոցների էկոլոգիական դասը	Ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերը և շարժիչի տեսակները	ՄԱԿ-ի ԵՏՀ կանոններով նախատեսված արտանետումների տեխնիկական բնութագրերը
3	Մ1, Ն1' 3,5 տ-ից ոչ ավելի առավելագույն զանգվածով, կայծային բռնկումով շարժիչներով (բենզինային, գազային) և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 83-04 կանոններով սահմանվածԲ(В), Ց(С) և Դ(Д) մակարդակներ
	Մ1'3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' գազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-02 կանոններով սահմանված Բ(В) մակարդակ ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)
	Մ1' 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' բենզինային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-03 կանոններով սահմանված CO'55q/կՎ.տ.ժ, C _m H _n '2,4q/կՎ.տ.ժ, NO _x '10,0 գ/կՎ.տ.ժ
4	Մ1, Ն1' 3,5 տ-ից ոչ ավելի առավելագույն զանգվածով, կայծային բռնկումով շարժիչներով (բենզինային, գազային) և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 83-05 կանոններով սահմանված Բ(В) մակարդակ ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)
	Մ1'3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3' գազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-04 կանոններով սահմանված Ա(Ա) մակարդակ ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)

	ՄՌ 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն2, Ն3՝ բենզինային շարժիչներով	CO' 20գ/կՎտ.ժ, C _m H _n ' 1,1 գ/կՎտ.ժ, NO _x ' 7 գ/կՎտ.ժ (ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-03 կանոններով փորձարկման ԵUS /ESC/ ցիլ)
	ՄՌ 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3՝ բարձր անցողականությամբ, դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 96-01 կանոնների 1-ին և 2-րդ լրացումներ ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)
5	Մ1, Ն1 3,5 տ-ից ոչ ավելի առավելագույն զանգվածով, կայծային բռնկումով շարժիչներով (բենզինային, գազային) և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 83-05 (1-3 ուղղումներով և 1-5 լրացումներով) կանոններով սահմանված F(B) մակարդակ ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)
	ՄՌ 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3՝ գազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-04 կանոններով սահմանված F(B) մակարդակ ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)
	ՄՌ 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3՝ բենզինային շարժիչներով	CO' 4 գ/կՎտ.ժ, C _m H _n ' 0,55 գ/կՎտ.ժ, NO _x ' 2 գ/կՎտ.ժ (ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-03 կանոններով փորձարկման ԵUS /ESC/ ցիլ)
6	ՄՌ 3,5 տ-ից ավելի առավելագույն զանգվածով, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3՝ գազային և դիզելային շարժիչներով	ՄԱԿ-ի ԵՏՀ N 49-04 կանոններով սահմանված F(B) մակարդակ ՄԱԿ-ի ԵՏՀ N 24-03 կանոնների 1-ին լրացում (միայն դիզելային շարժիչների համար)

**V. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԲԱՆԱԾ ԳԱԶԵՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԸ**

6. Բենզինային շարժիչներով Մ և Ն խմբերի բոլոր ենթախմբերի ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում (ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների համակարգից արտանետվող, դեպի մթնոլորտ արտազատվող գազեր) պարունակվող ածխածնի օքսիդի և ածխաջրածինների նորմերը սահմանվում են ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների պարագ ընթացքի 2 ռեժիմների՝ ծնկաձև լիսեռի պտտման նվազագույն հաճախության ($n_{սուս}$) և առավելագույն հաճախության ($n_{բարձ}=0,8n_{սուս}$) համար: Ծնկաձև լիսեռի

պտտման հաճախությունը պարագ ընթացքի դեպքում ուսուակ և ուսուակ սահմանվում են ավտոտրանսպորտային միջոցն արտադրող կազմակերպության կողմից: Եթե ավտոտրանսպորտային միջոցն արտադրող կազմակերպության կողմից սահմանված տվյալները բացակայում են, ապա՝

1) ուսուակ-ի արժեքը չպետք է գերազանցի 1100 պտ/րոպ՝ Մ1, Ն1 ենթախսմբերի համար, 900 պտ/րոպ՝ մյուս բոլոր ենթախսմբերի համար.

2) ուսուակ-ի արժեքը պետք է լինի՝ 2500–3500 պտ/րոպ՝ չեզոքացուցման համակարգ ունեցող Մ1, Ն1 ենթախսմբերի համար, 2000–3500 պտ/րոպ՝ չեզոքացման համակարգ ունեցող Մ1, Ն1 ենթախսմբերի համար, 2000–2800 պտ/րոպ՝ մյուս բոլոր ենթախսմբերի համար:

7. Տվյալ ավտոտրանսպորտային միջոցն արտադրող կազմակերպության կողմից ավտոտրանսպորտային միջոցի շահագործման փաստաթղթերում սահմանվում են նաև ածխածնի օքսիդի, ածխաջրածինների սահմանային թույլատրերի նորմերը բանած գազերում և եռաբաղդրիչ չեզոքացման համակարգ ունեցող միջոցների համար՝ օդի ավելցուկի և գործակցի արժեքների թույլատրերի տիրույթը: Եթե շահագործման փաստաթղթերում օդի ավելցուկի և գործակցի վերաբերյալ տվյալները բացակայում են, ապա և գործակիցը պետք է լինի՝ 0,97-ից մինչև 1,03:

8. Բենզինային շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում ածխածնի օքսիդի և ածխաջրածինների պարունակությունները, ըստ շարժիչի ծնկաձև լիսեռի պտտման հաճախության, պետք է լինեն արտադրող կազմակերպության կողմից սահմանված նորմերի սահմաններում, բայց ոչ ավելի, քան N 3 աղյուսակում ներկայացված նորմերը:

Աղյուսակ N 3

Ավտոտրանսպորտային միջոցների ենթախսմբերը	Շարժիչի ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունը	Ածխածնի օքսիդի ծավալային բաժինը (%)	Ածխաջրածինների ծավալային բաժինը (մլ ⁻¹)
Մ1, Մ2, Մ3, Ն1, Ն2, Ն3՝ արտադրված մինչև 1986 թ. հոկտեմբերի 10-ը	ուսուակ	4,5	-

Մ1 և Ն1՝ չեղոքացման համակարգ չունեցող	n_{սվազ}	3,5	1200
	n_{բարձ}	2,0	600
Մ2, Մ3, Ն2, Ն3՝ չեղոքացման համակարգ չունեցող	n_{սվազ}	3,5	2500
	n_{բարձ}	2,0	100
Մ1 և Ն1՝ երկրադադրիչ չեղոքացման համակարգ ունեցող	n_{սվազ}	1,0	400
	n_{բարձ}	0,6	200
Մ2, Մ3, Ն 2, Ն3 երկրադադրիչ չեղոքացման համակարգ ունեցող	n_{սվազ}	1,0	600
	n_{բարձ}	0,6	300
Մ1 և Ն1՝ եռարադադրիչ չեղոքացման համակարգ ունեցող	n_{սվազ}	0,5	100
	n_{բարձ}	0,3	100
Մ2, Մ3, Ն2, Ն3՝ եռարադադրիչ չեղոքացման համակարգ ունեցող	n_{սվազ}	0,5	200
	n_{բարձ}	0,3	200

9. Բանած գագերի չեղոքացման համակարգը շարժիչի տարրեր ոեժիմներում աշխատելու ընթացքում առաջացած բանած գագերում պարունակվող աղտոտող նյութերի արտանետումների նվազեցումն ապահովող սարքավորումների ամրողություն է, որը ներառում է կատալիտիկ չեղոքացուցիչ և դրա հետ գործնականորեն կապված տվիչներ ու կառավարման համակարգեր: Չեղոքացման համակարգերը լինում են՝

- 1) Երկրադադրիչ՝ հիմնականում ածխածնի օքսիդի և ածխաջրածինների արտանետումների նվազեցումն ապահովող չեղոքացման համակարգ.
- 2) Եռարադադրիչ՝ ածխածնի օքսիդի, ածխաջրածինների և ազոտի օքսիդների արտանետումների նվազեցումն ապահովող հետադարձ կապով (ըստ օդի ավելցուկի և գործակցի) չեղոքացման համակարգ:

10. Մինչև 3000 կմ վազք ունեցող ավտոտրանսպորտային միջոցների բանած գագերում պարունակվող ածխածնի օքսիդի և ածխաջրածինների նորմատիվները սահմանվում են արտադրող կազմակերպության տեխնոլոգիական նորմերում:

11. Գազային շարժիչներով աշխատող Մ և Ն խմբերի բոլոր ենթախմբերի ավտոտրանսպորտային միջոցների բանած գագերում ածխածնի օքսիդի և ածխաջրածինների պարունակությունները՝ ըստ վառելիքի տեսակի և շարժիչի աշխատանքային ծավալի, չպետք է գերազանցեն N 4 աղյուսակում սահմանված նորմերը:

Աղյուսակ N 4

Շարժիչի ծնկաձև լիսեռի պտտման հաճախու- թյունը	Ածխածնի օքսիդի ծավալային բաժինը (%)		Ածխածնի օքսիդի ծավալային բաժինը (մլ ⁻¹)		Ածխածնի օքսիդի ծավալային բաժինը (%)		Ածխածնի օքսիդի ծավալային բաժինը (մլ ⁻¹)						
	ՀՆԳ	ՍԲԳ	շարժիչի աշխատանքային ծավալը, լմ ³				ՀՆԳ	ՍԲԳ	շարժիչի աշխատանքային ծավալը, լմ ³				
			մինչև 3 ներառյալ		3-ից բարձր				մինչև 3 ներառյալ		3-ից բարձր		
	մինչև 2000 թ. հուլիսի 1-ը թողարկված ավտոտրանսպորտային միջոցների համար				2000 թ. հուլիսի 1-ից հետո թողարկված ավտոտրանսպորտային միջոցների համար								
n _{սվազ}	3,0	3,0	1000	800	2200	2000	3,0	2,0	1000	700	2200	1800	
n _{բարձ}	2,0	2,0	600	500	900	850	2,0	1,5	600	400	900	750	

12. Ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունը պարագ ընթացքի դեպքում n_{սվազ} և n_{բարձ}

սահմանված են լինում ավտոտրանսպորտային միջոցի շահագործման հրահանգում: Եթե դրանք սահմանված չեն, ապա ստուգումների ժամանակ ընդունում են՝

$$n_{\text{սվազ}} = (800 \pm 50) \text{ պտ/րոպ}, n_{\text{բարձ}} = (3000 \pm 10) \text{ պտ/րոպ}$$

13. ԱՆ 3 և 4 աղյուսակներով սահմանված ծավալային տոկոսներով արտահայտված

նորմերը կշռային միավորով արտահայտելու համար և հակառակը, վերահաշվարկը կատարվում է 1-4-րդ բանաձևերով.

$$1 \text{ մլ}^{-1} = 0,0001 \text{ ծավալային բաժին } (\%) \quad (1)$$

$$1 \text{ ծավալային բաժին } (\%) = 10000 \text{ մլ}^{-1} \quad (2)$$

$$1 \text{ ծավալային բաժին } (\%) = \frac{\text{MP}}{0,006236T}, \text{ մգ/մ}^3 \quad (3)$$

$$1 \text{ մլ}^{-1} = \frac{\text{MP}}{62,36T}, \text{ մգ/մ}^3 \quad (4)$$

որտեղ՝

M' տվյալ նյութի մոլեկուլային կշիռն է

P' մթնոլորտային ճնշումն է (մմ սնդիկի սյուն)

ՏՌ բացարձակ ջերմաստիճանն է՝ ${}^{\circ}\text{Կ}$:

14. Դիգելային շարժիչներով Մ և Ն խմբերի ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում ազոտի օքսիդների, ածխածնի օքսիդի և աշխաջրածինների պարունակությունները չափությունը կերպարագեն N 5 այլուսակում նշված նորմերը:

Այլուսակ N 5		
Ազոտի օքսիդներ գ/Կվտ.ժ	Ածխածնի օքսիդ գ/Կվտ.ժ	Ածխաջրածիններ գ/Կվտ.ժ
9,0	4,9	1,23

15. Ածխածնի օքսիդի, ածխաջրածինների և ազոտի օքսիդների արտանետումները՝ արտահայտված զանգվածով (q/\dot{d}), հաշվարկվում են 5-7 -րդ բանաձևերով՝

$$G_{\text{CO}} = 0,000966 W_{\text{CO}} F_{\text{CO}} (G_T + G_B) \quad (5)$$

$$G_{\text{CH}} = 0,000478 W_{\text{CH}} (G_T + G_B) \quad (6)$$

$$G_{\text{NOx}} = 0,001587 W_{\text{NOx}} F_{\text{NOx}} (G_T + G_B) \quad (7)$$

որտեղ՝

G_{CO} , G_{CH} , G_{NOx} ՝ համապատասխանաբար ածխածնի օքսիդի, ածխաջրածինների և ազոտի օքսիդների արտանետումներն են՝ արտահայտված զանգվածով (q/\dot{d})

$W_{\text{CO}}, W_{\text{CH}}, W_{\text{NOx}}$ ՝ համապատասխանաբար ածխածնի օքսիդի, ածխաջրածինների, ազոտի օքսիդների կոնցենտրացիաներն են ($\text{մ}^3\text{մ}^{-3}$)

G_T ՝ դիգելային վառելիքի ծախսն է՝ կգ/ \dot{d}

G_B ՝ դիգելի գլանների մեջ մտնող օդի ծախսն է՝ կգ/ \dot{d}

F_{CO} , F_{NOx} ՝ խոնավության ուղղման գործակիցներն են՝ համապատասխանաբար ածխածնի օքսիդի և ազոտի օքսիդների համար, հաշվարկված 8 և 9-րդ բանաձևերով.

$$F_{\text{CO}} = 1 - 1,85 \frac{G_T}{G_B} \quad (8)$$

$$F_{NO_x} = \left[1 + \left(\frac{0,044G_T}{G_B} - 0,0038 \right) \cdot (7d - 75) + \left(0,0053 - \frac{0,116G_T}{G_B} \right) \cdot 1,8 \cdot (T_{2\text{p}\varphi} - 302) \right]^{-1}$$

(9)

որտեղ՝

d ՝ ջրային գոլորշինների պարունակությունն է օդի ծավալը չափող սարքավորման մուտքում, գ/կգ, հաշվարկված 10-րդ բանաձևով

$T_{2\text{p}\varphi}$ ՝ շրջակա օդի շերմաստիճանն է, $^{\circ}\text{C}$

$$d = \frac{6,21\varphi_{2\text{p}\varphi} P_s}{B_{2\text{p}\varphi} - 0,01\varphi_{2\text{p}\varphi} p_s} \quad (10)$$

որտեղ՝

$\varphi_{2\text{p}\varphi}$ ՝ շրջակա օդի հարաբերական խոնավությունն է, %

P_s ՝ ջրային հազեցած գոլորշու մասնակի մաշումն է օդի տվյալ շերմաստիճանում, կՊա

$B_{2\text{p}\varphi}$ ՝ մթնոլորտային ճշշումն է, կՊա:

16. Ածխածնի օքսիդի, ածխաջրածինների և ազոտի օքսիդների տեսակարար արտանետումները համապատասխանաբար՝ g_{CO} , g_{CH} , g_{NO_x} (գ/կՎտ.ժ) հաշվարկվում են NN 11-13 բանաձևերով.

$$g_{CO} = \frac{\sum_{e=1}^{13} (G_{CO} K_B)}{\sum_{e=1}^{13} (N_e K_B)} \quad (11)$$

$$g_{CH} = \frac{\sum_{e=1}^{13} (G_{CH} K_B)}{\sum_{e=1}^{13} (N_e K_B)} \quad (12)$$

$$g_{NO_x} = \frac{\sum_{e=1}^{13} (G_{NO_x} K_B)}{\sum_{e=1}^{13} (N_e K_B)} \quad (13)$$

որտեղ՝

K_B ՝ դիգելային շարժիչի ռեժիմների կշռային գործակիցն է

N_e ՝ արտանետումների որոշման համար դիգելային շարժիչի հզորությունն է՝ N 6 աղյուսակով սահմանված ռեժիմներին համապատասխան (կՎ.տ.ձ):

17. Արտանետումները որոշվում են N 6 աղյուսակում ներկայացված 13 ռեժիմների

դեպքում:

Աղյուսակ N 6

Ռեժիմի համարը	Դիգելային շարժիչի ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունը	Արագության տվյալ ռեժիմում վառելիքի լրիվ մատակարարման դեպքում ոլորման մոմենտը (%)	Ռեժիմի կշռային գործակիցը (K_B)
1.	Նվազագույն հաստատուն	0	0,0833
2.	Ոլորման առավելագույն մոմենտին համապատասխանող	10	0,0800
3.	Ոլորման առավելագույն մոմենտին համապատասխանող	25	0,0800
4.	Ոլորման առավելագույն մոմենտին համապատասխանող	50	0,0800
5.	Ոլորման առավելագույն մոմենտին համապատասխանող	75	0,0800
6.	Ոլորման առավելագույն մոմենտին համապատասխանող	100	0,2501
7.	Նվազագույն հաստատուն	0	0,0833
8.	Նոմինալ	100	0,1000
9.	Նոմինալ	75	0,0200
10.	Նոմինալ	50	0,0200
11.	Նոմինալ	25	0,0200
12.	Նոմինալ	10	0,0200
13.	Նվազագույն հաստատուն	0	0,0833

18. Դիզելային շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերի ծխայնության նորմերը սահմանվում են բոլոր ենթախմբերի համար, ազատ արագացման ռեժիմում կախված բանած գազերի պայմանական ծախսից: Բանած գազերի պայմանական ծախսը՝ $G_{\text{p.q.}}$, հաշվարկվում է 14-15-րդ բանաձևերով՝

$$G_{\text{p.q.}} = \frac{V_h \cdot n}{60}, \text{ երկտակտանի դիզելների համար (14)}$$

$$G_{\text{p.q.}} = \frac{V_h \cdot n}{120}, \text{ չորստակտանի դիզելների համար (15)}$$

որտեղ՝

V_h ՝ դիզելային շարժիչի գլանների աշխատանքային ծավալն է (լմ^3)

n ՝ ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունն է (պտ/րոպ):

19. Դիզելային շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների ծխայնության նորմերը չպետք է գերազանցեն N 7 աղյուսակում սահմանված նորմեր՝

Աղյուսակ N 7

Բանած գազերի պայմանական ծախսը ($\text{լմ}^3/\text{l}$)	Ծխայնության սահմանային թույլատրելի նորմը (լույսի կլանման գործակիցը), ոչ ավելի (մ^{-1})	Բանած գազերի պայմանական ծախսը ($\text{լմ}^3/\text{l}$)	Ծխայնության սահմանային թույլատրելի նորմը (լույսի կլանման գործակիցը), ոչ ավելի (մ^{-1})
42 և դրանից ավելի	2,260	125	1,345
45	2,190	130	1,320
50	2,080	135	1,300
55	1,985	140	1,270
60	1,900	145	1,250
65	1,840	150	1,225
70	1,775	155	1,205
75	1,720	160	1,190
80	1,665	165	1,170
85	1,620	170	1,155
90	1,575	175	1,140
95	1,535	180	1,125
100	1,495	185	1,110
105	1,465	190	1,095

110	1,425	195	1,080
115	1,395	200 և ավելի	1,065
120	1,370		

20. Սույն կետի N 7 աղյուսակով սահմանված ծխայնության միջանկյալ նորմերը որոշվում են գծային միջարկման (ինտերպոյացիայի) սկզբունքով: Օրինակ՝ եթե բանած գագերի պայմանական ծախսը կազմում է $52,5 \text{մ}^3/\text{վ}$ $\frac{50+55}{2}$, ապա ծխայնության սահմանային թույլատրելի նորմը, հաշվարկած միջարկման սկզբունքով, կլինի՝ $\frac{2,08+1,985}{2} = 2,0325 \text{ մ}^3$:

21. Ազատ արագացման ռեժիմում լույսի կլանման գործակցի սահմանային թույլատրելի արժեքը (մ^3) փորձավարում (թողարկող կազմակերպության կողմից սահմանված վագքի չափը շահագործման սկզբնական շրջանի համար, որի ընթացքում ներկայացվում են շահագործման հրահանգում նշված հատուկ պահանջներ) անցած ավտոտրանսպորտային միջոցների համար սահմանվում է շահագործման հրահանգում:

22. Փորձավարում շանցած ավտոտրանսպորտային միջոցների ծխայնությունը չպետք է գերազանցի լույսի կլանման գործակցի սահմանված արժեքն ավելի, քան $0,5 \text{ մ}^3$ -ով:

23. Եթե շահագործման հրահանգում ծխայնության նորմը նշված չէ, ապա ազատ արագացման ռեժիմում այն չպետք է գերազանցի՝ $2,5 \text{ մ}^3$ -ը՝ առանց ներմղման աշխատող շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների համար, $3,0 \text{ մ}^3$ -ը՝ ներմղումով աշխատող շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների համար:

24. Ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների սնուցման համար օգտագործվող վառելիքի տեսակներին ներկայացվող պահանջները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592 –Ն որոշմամբ:

25. Լույսի կլանման գործակցի (k) և լույսի թույլացման գործակցի (N) փոխարարքերությունը բնութագրվում է հետևյալ բանաձևով՝

$$k = -\frac{1}{L} \log_e \left(1 - \frac{N}{100}\right) \quad \text{կամ} \quad k = -\frac{1}{L} \ln \left(1 - \frac{N}{100}\right) \quad (16)$$

որտեղ՝

N լուսի թուլացման գործակիցն է, %

k' լուսի կլանման գործակիցն է, մ^{-1}

L' ծխաչափի արդյունաբար բազան է, մ

<<Ծխաչափի արդյունաբար բազան>> ծխաչափի աշխատանքային խողովակի մեջ

լցված բանած զագերի միջով անցնող լուսի ճառագայթների հետազօն երկարությունն է, որը

նշված է լինում ծխաչափի վրա:

26. Լուսի կլանման գործակից (k , մ^{-1}) վերահաշվարկը լուսի թուլացման գործակից ($N, \%$)

(0.43մ արդյունաբար բազա ունեցող ծխաչափի համար) ներկայացված է N 8 աղյուսակում

Աղյուսակ N 8

$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	0,0 0,0	0,1 4	0,2 8	0,3 11	0,4 15	0,5 20	0,55 21	0,6 23	0,65 24
$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	0,7 26	0,75 28	0,8 29	0,85 31	0,9 32	0,95 34	1,0 35	1,05 36	1,1 38
$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	1,15 39	1,2 40	1,25 42	1,3 43	1,35 44	1,4 45	1,45 46	1,5 47	1,55 49
$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	1,6 50	1,65 51	1,7 52	1,75 53	1,8 54	1,85 55	1,9 56	1,95 57	2,0 58
$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	2,05 59	2,1 59,5	2,15 60	2,2 61	2,25 62	2,3 63	2,35 64	2,4 64,4	2,45 65
$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	2,5 66	2,55 67	2,6 67,3	2,65 68	2,7 69	2,75 69,3	2,8 70	2,85 71	2,9 71,3
$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	3,0 72,5	3,05 73	3,1 73,6	3,15 72	3,2 75	3,25 75,3	3,3 76	3,35 76,3	3,4 77
$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	3,45 77,3	3,5 78	3,55 78,3	3,6 79	3,65 79,2	3,7 80	3,75 80,1	3,8 80,5	3,85 81
$k, \text{մ}^{-1}$ $N, \%$	3,9 81,3	3,95 81,7	4,0 82	4,05 82,5	4,1 83	4,15 83,3	4,2 83,7	4,25 84	∞ 100

27. Տ խմբի տրանսպորտային միջոցների բանած գաղերում ազոտի օքսիդների, ածխածնի օքսիդի և աշխաջրածինների պարունակությունները չպետք է գերազանցեն NN 9 և 10 աղյուսակներով ներկայացված նորմերը:

1) ածխածնի օքսիդի, ածխաջրածինների և ազոտի օքսիդների սահմանային թույլատրելի նորմերը նոր թողարկված և վերանորոգված դիգելային շարժիչներով միջոցների բանած գաղերում անսահմանափակ օդափոխությամբ վայրեր՝ դաշտեր, մարգագետիններ, այգիներ, բնակավայրերի տարածքներ և այլն, սահմանափակ օդափոխությամբ վայրեր՝ փակ կամ կիսափակ վայրեր:

Աղյուսակ N 9

Աղտոտող նյութի անվանումը	Տեսակարար արտանետումներն ըստ օդափոխության վայրերի (գ/Կվտ.ժ)	
	անսահմանափակ	սահմանափակ
Ածխածնի օքսիդ	10,0	4,0
Ածխաջրածիններ	3,0	1,5
Ազոտի օքսիդներ	18,0	9,0

2) ածխածնի օքսիդի, ածխաջրածինների և ազոտի օքսիդների սահմանային թույլատրելի նորմերը շահագործման մեջ գտնվող դիգելային շարժիչներով միջոցների բանած գաղերում

Աղյուսակ N 10

Աղտոտող նյութի անվանումը	Տեսակարար արտանետումներն ըստ օդափոխության վայրերի (գ/Կվտ.ժ)	
	անսահմանափակ	սահմանափակ
Ածխածնի օքսիդ	14,0	5,6
Ածխաջրածիններ	4,5	2,2
Ազոտի օքսիդներ	18,0	9,0

28. Տ խմբի տրանսպորտային միջոցների բանած գաղերի ծխայնության նորմերը սահմանվում են՝ կախված օդի պայմանական ծախսից՝ Q, հաշվարկված 17-18-րդ բանաձներով և օդափոխության տեսակից.

$$Q = \frac{V_h \cdot n}{120} , \text{չորստակտանի դիզելների համար, (17)}$$

$$Q = \frac{V_h \cdot n}{60} , \text{երկտակտանի դիզելների համար, (18)}$$

որտեղ՝

V_h ՝ դիզելային շարժիչի գլանականի աշխատանքային ծավալն է, լմ³

n ՝ ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունն է, պտ/ րոպ:

29. Տ խմբի տրանսպորտային միջոցների բանած գազերի ծխախության նորմերը,

կախված օդի պայմանական ծախսից և օդափոխության տեսակից, չափով է գերազանցեն N 11

աղյուսակում սահմանված նորմերը:

Աղյուսակ N 11

Օդի պայմանա- կան ծախսը (լմ ³ /վ)	Ծխախության սահմանային թույլատրելի նորմը (լույսի կլանման գործակիցը՝ k), ոչ ավելի, մ ⁻¹ (N, %)		Օդի պայմանական ծախսը (լմ ³ /վ)	Ծխախության սահմանային թույլատրելի նորմը (լույսի կլանման գործակիցը՝ k), ոչ ավելի, մ ⁻¹ (N, %)	
	անսահմանափակ	սահմանափակ		անսահմանափակ	սահմանափակ
42 և դրանից պակաս	2,260(62,2)	1,760 (53,1)	125	1,345 (43,9)	0,845 (30,5)
45	2,190 (61,0)	1,690 (51,6)	130	1,320 (43,3)	0,820 (29,7)
50	2,080 (59,1)	1,580 (49,3)	135	1,300 (42,8)	0,800 (29,1)
55	1,985 (57,4)	1,485 (47,2)	140	1,270 (42,1)	0,770 (28,2)
60	1,900 (55,8)	1,400 (45,2)	145	1,250 (41,6)	0,750 (27,6)
65	1,840 (54,7)	1,340 (43,8)	150	1,225 (40,9)	0,725 (26,8)
70	1,775 (53,4)	1,275 (42,2)	155	1,205 (40,4)	0,705 (26,2)
75	1,720 (52,3)	1,220 (40,8)	160	1,190 (40,1)	0,690 (25,7)
80	1,665 (51,1)	1,165 (39,4)	165	1,170 (39,5)	0,670 (25,0)
85	1,620 (50,2)	1,120 (38,2)	170	1,155 (39,1)	0,655 (24,5)
90	1,575 (49,2)	1,075 (37,0)	175	1,140 (38,7)	0,640 (24,1)
95	1,535 (48,3)	1,035 (35,9)	180	1,125 (38,4)	0,625 (23,6)
100	1,495 (47,4)	0,995 (34,8)	185	1,110 (38,0)	0,610 (23,1)
105	1,465 (46,7)	0,965 (33,8)	190	1,095 (37,6)	0,595 (22,6)
110	1,425 (45,8)	0,925 (32,8)	195	1,080 (37,1)	0,580 (22,1)
115	1,395 (45,1)	0,895 (31,9)	200 և ավելի	1,065 (36,7)	0,565 (21,6)
120	1,370 (44,5)	0,870 (31,2)			

30. Սույն կետի N 11 աղյուսակով սահմանված ծխայնության սահմանային թույլատրելի միջանկյալ նորմերը որոշվում են գծային միջարկման սկզբունքով:

VI. ԶԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

31. Ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում պարունակվող աղտոտող նյութերի չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

32. Ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում պարունակվող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի նորմերի պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VIII. ՄԱԿԻ ԵՏԸ-Ի ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

33. ՄԱԿԻ ԵՏԸ-Ի կանոններ N 24 (24-03՝ 1-ին լրացում միայն դիգեների համար).

Միօրինակ կարգադրագրեր, որոնք վերաբերում են՝

- 1) սեղմումային բոցավառումով շարժիչների պաշտոնապես հայտարարագրմանը՝ արտանետվող աղտոտող նյութերի արտանետումների մասով.
- 2) ավտոտրանսպորտային միջոցների պաշտոնապես հայտարարագրմանը՝ սեղմումային բոցավառումով շարժիչների տեղադրման մասով.
- 3) սեղմումային բոցավառումով շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների պաշտոնապես հայտարարագրմանը՝ տեսանելի աղտոտող նյութերի արտանետումների մասով.
- 4) սեղմումային բոցավառումով շարժիչների հզորության չափմանը:

34. ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կանոններ N 49 (49-01, 49-02, 49-03, 49-04).

Միօրինակ կարգադրագրեր՝ որոնք վերաբերում են պաշտոնապես հայտարարագրված սեղմումային բոցավառումով շարժիչներին, բնական գազով աշխատող շարժիչներին, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) աշխատող շարժիչներին, հարկադրական վառումով շարժիչներին, ինչպես նաև սեղմումային բոցավառումով (դիզելային), բնական գազով և հարկադրական վառումով հեղուկացված նավթային գազով աշխատող շարժիչներ ունեցող միջոցներին, դրանցից արտազատված աղտոտող նյութերի մասով:

35. ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կանոններ N 83 (83-02, 83-03, 83-04, 83-05 (1-3-րդ ուղղումներ և 1-5-րդ լրացումներ).

Միօրինակ կարգադրագրեր, որոնք վերաբերում են պաշտոնապես հայտարարագրված տրանսպորտային միջոցների շարժիչներին՝ աղտոտող նյութերի արտանետումների մասով, կախված դրանց համար անհրաժեշտ վառելիքի տեսակից:

36. ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կանոններ N 96 (96-01՝ 1-2-րդ լրացումներ).

Միօրինակ կարգադրագրեր, որոնք վերաբերում են պաշտոնապես հայտարարագրված գյուղատնտեսական տեխնիկայի և ամենագնաց տեխնիկայի վրա տեղադրված սեղմումային բոցավառումով շարժիչներին՝ դրանցից արտանետվող աղտոտող նյութերի մասով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ